ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ԲԱԲԱՅԱՆ

ԱԴԱՆԱՅԻ 1909Թ. ԿՈՏՈՐԱԾԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ. ՀԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ադանայի կոտորածի ուսումնասիրության բնագավառում հայ իրականության մեջ և արտասահմանում տարբեր լեզուներով հրատարակվել են շատ մենագրություններ, հոդվածներ, հուշագրություններ, փաստաթղթեր ու վավերագրեր[1], այնուամենայնիվ խնդրո առարկայի որոշ առանցքներ տակավին լուսաբանման կարիք ունեն: Սույն հոդվածում օգտագործելով մամուլում տեղ գտած Մեջլիսի նիստերի արձանագրությունները, ինչպես նաև այլ աղբյուրներ, փորձ է արվում հնարավորության սահմաններում անդրադառնալ Օսմանյան խորհրդարանում Ադանայի դեպքերի քննարկմանը, ինչպես նաև այս խնդրում հայ երեսփոխանների կատարած դերին:

1908թ. «Իթթիհատ վե Թերաքքի» քաղաքական կուսակցությունը, անցնելով իշխանության գլուխ, սկսեց իրականացնել իր բուն ծրագրերը կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, որը ազգայնամոլությունը բարձրացրեց պետական քաղաքականության մակարդակի վրա: Երիտթուրքերի՝ մահմեդական տարբեր ժողովուրդներին ձուլելու, իսկ քրիստոնյաներին բնաջնջելու ծրագրի իրականացման առաջին նախանշանը Կիլիկիայի քաղաքների, մասնավորապես Ադանայի հայ ազգաբնակչության կոտորածն էր: Քանի որ դեպքերը համընկան 1909թ. մարտի 31-ի (ապրիլի 13-ի) հետադիմական շարժման, ուստի պատահական չէ, որ խնդրո շուրջ պատասխանատվության հարցում կան տարբեր վարկածներ ու մոտեցումներ, իրարամերժ և հակասական տեսակետներ, զանազան կարծիքներ ու գնահատականներ[2]:

Ադանայի երկփող կոտորածը, որին նոր վարչակարգի պայմաններում զոհ գնացին մոտավորապես 30 հազար հայ, կազմակերպվել և իրահանգավորվել էր երիտթուրքերի կողմից. թեև վերջիններս փորձեցին մեղքը բարդել սկզբում Աբդուլ Համիդ II-ի կողմնակիցների վրա, այնու-

հետև հայ քաղաքական կուսակցությունների վրա՝ մտացածին մեղադրանք հարուցելով, թե նրանք ապստամբություն նախապատրաստելու պատճառով սանձահարվել են տեղական իշխանության զորամասերի և մահմեդական բնակչության կողմից[3]: Ինչ վերաբերում է դաշնակցականներին, ապա վերջիններս նախընտրեցին այս արյունալի սպանդը վերացրել Դիլ մաղակալուզին. ուստի և Աղանայի ջարդի օրերին ու հետագայում ևս շարունակեցին սերտորեն համագործակցել Իթթիհատ կուսակցության հետ: Թվում էր Աղանայի դեպքերից հետո Դաշնակցություն կուսակցությունը երիտթուրքերի հետ կխզի իր կապերը. սակայն ցավոք, դա տեղի չունեցավ, ընդհակառակը, 1909թ. սեպտեմբերին Հ.Յ.Դաշնակցության 5-րդ համագումարը որոշում կայացրեց շարունակել համագործակցել իթթիհատականների հետ: Արդյունքում երկու կուսակցության ղեկավարների միջև ստորագրվեց մի փաստաթուղթ, որը «Դրոշակ» թերթում լույս տեսավ «Համերաշխություն իթթիհատի և դաշնակցության միջև» խորագրով[4]:

Այս պարագայում այլ դիրքորոշում ունեցավ Հնչակյան կուսակցությունը, որն ի տարբերություն Դաշնակցության, հեղափոխությունից առաջ ևս խուսափեց երիտթուրքերի հետ համագործակցելուց, և ստեղծված իրավիճակում նպատակահարմար գտավ հանդես գալ հակաիթթիհատական, այսինքն՝ «Ազատություն և համաձայնություն» («Հյուրիեթ վե իթիլաֆ») կուսակցության դիրքերից[5]:

Ինչ վերաբերում է երիտթուրքերի կողմից հայ քաղաքական կուսակցություններին ու ֆիդայիներին ներկայացրած մեղադրանքներին, հարկ ենք համարում փաստել, որ 1909թ. մարտի 31-ի ապստամբության ճնշման գործում թե ֆիդայիների, և թե դաշնակցականների ու հնչակյանների ցուցաբերած օգնությունը փոքր չէր և արժանի էր հիշատակման[6]:

Արդի թուրք պատմաբաններն ու հեղինակները խեղաթյուրելով պատմական իրողությունը, այդ թվում նաև Աղանայի ջարդը, ջանքեր չեն խնայում արդարացնելու երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականությունը: Օրինակ, պանթուրքիստ պատմաբան Էսադ Ուրասը որպես Աղանայի ջարդերի գլխավոր մեղավոր մատնանշում է հայերին, որոնք նրա հավաստիացմամբ, «տանջում էին մահմեդականներին. երիտթուրքերի կառավարությունն այստեղ մեղք չունի», գրում է նա[7]: Պատմության կեղծարարները, հանձինս Էսադ Ուրասի[8], Սաղի Քոչաշի[9], Քյամուրան Գյուրունի[10] և մյուսների որպես Աղանայի 1909թ. ջարդի գլխավոր պատասխանատու հիշատակում են Աղանայի հայոց առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի անունը, սակայն այլ աղբյուրներ մատնանշում են, որ դա Իթթիհատի կողմից նախապես ծրագրավորած ձեռնարկ էր:

Ուշագրավ է Աղանայի ողբերգական դեպքերի ժամանակակից, Հալեպում հրատարակվող «Ալ Թագատտոմ» օրաթերթի խմբագիր՝ Շուքրի

Բնեյդերի տեսակետները ջարդի գլխավոր պատճառների վերաբերյալ: Վերջինիս եզրահանգումներով Ադանայի թուրքերի մոտ գոյություն ուներ այլոյնահեղություն պատճառելու նախատրամադրվածություն և կառավարության անտարբեր վերաբերմունքի պարագայում, ջարդերը ստացան ավելի համընդհանուր բնույթ[11]:

Այն հանգամանքը, որ Ադանայի կոտորածը երիտթուրքերի ծրագրային գործունեության մի մասն էր, հաստատում էր դեռևս 1909թ. Սալոնիկում գումարված Իթթիհատի համագումարը, սրտեղ Թալեաթի կողմից ընթերցվել էր գաղտնի տեղեկագիր՝ հայության բնաջնջման հրահանգների վերաբերյալ: Այս տեղեկագրի բովանդակության մասին տեղեկացված լինելով՝ Լոնդոնի «Դեյլի Նյուզ» թերթի Պոլսի թղթակիցը, ծպտված մտել էր ժողովասրահ և վերոհիշյալի մասին հայտնել իր թերթին[12]:

Թուրք հեղինակները, բնական է, գիտակցաբար շրջանցում են ակնհայտ դարձած իթթիհատական Իսմայիլ Սեֆայի «Իթիդալ» թերթում ապրիլի 22-ին, այսինքն ջարդերի վերսկսումից ընդամենը երեք օր առաջ հրատարակած հոդվածը, որտեղ բացահայտ կերպով գրված էր. «Այն ինչ կատարվեց, դեռ բոլորը չէ: Մենք միայն կարճատև դադար տվեցինք: Բայց մենք դեռ կտեսնենք, թե ինչով կավարտվի այս բոլորը»[13]:

Այսպիսով, դատելով վերը շարադրվածից, ակնհայտ է դառնում, որ երկրորդ Սահմանադրության հռչակումը չփոխեց կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների վիճակը, որի ամենամեծ ապացույցն, անավասիկ, Ադանայի ոճիրն էր և Օսմանյան պառլամենտի դրիքորոշումը դեպքերի ճշմարտությունն երևան հանելու ուղղությամբ: Թուրք խորհրդարանականների ճնշող մեծամասնությունը մեծ ջանքեր գործադրեց ոչ միայն ժխտելու թուրքերի մեղսակցության հարցը, այլ նաև ամեն կերպ փորձեց կատարվածի մեղքը բարդել հայերի վրա:

Ինչպես փաստում է Մ.Վարանդյանը «Թուրք պառլամենտն էլ քաջություն չունեցավ խարանելու կատարված ոճիրը»[14]: Խորհրդարանի հայ պատգամավորները դեպքի հենց առաջին օրերին իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին ընդդեմ անօրինությունների և միաձայն Իթթիհատից պահանջեցին հայտարարել, որ Ադանայի գործում հայերը բացարձակապես անմեղ են: Միևնույն ժամանակ նրանք հանդես եկան հանցագործներին պատժելու և պատասխանատվության ենթարկելու, տուժածներին նյութական օգնություն ցուցաբերելու պահանջներով:

1909թ. ապրիլի 11-ին չորս երեսփոխաններ՝ Գրիգոր Զոհրապի, Թալեսթի, Հակոբ Պապիկյանի և Էրզրումի երեսփոխան Արմեն Գարոյի կողմից խորհրդարանին ներկայացվեց մի թաքրիր (զեկուցագիր)՝ Ադանայի և հարակից շրջանների ջարդը անմիջապես դադարեցնելու և նորանոր աղետները կասեցնելու վերաբերյալ: Համագումար ժողովը միաձայն որոշում կայացրեց նախագահի կողմից դեպքի վայր անմիջապես մի ազդեցիկ հրահանգ հեռագրելու վերաբերյալ: Ադանայի իշխանութ-

յուններին ուղղվելիք հեռագրի բովանդակությունն ու ոճը հայ երեսփոխաններ Հ.Պասվելյանի, Ն.Տաղավարյանի, Պ.Հալաճյանի և Հ.Պոյաճյանի գնահատմամբ բարվոքանալն մեղմ էր և խրթին. այդ իսկ պատճառով հաշվի առնելով նաև, որ Սվազը նույնպես այդ իրավիճակում է գտնվում, նրանք հանդես եկան հեռագիրն ավելի խիստ և հնարավորինս հասկանալի ու նվազ գրական կերպով խմբագրելու պահանջով: Ծերակույտի նախագահ Սայիդ փաշայի առաջարկությամբ կազմվեց հանձնախումբ՝ նոր և ավելի ազդու հեռագիր խմբագրելու համար[15]: Օսմանյան խորհրդարանը, քննարկելով Ադանայի ջարդի խնդիրը, ինչպես նաև հաշվի առնելով հայ պատգամավորների պահանջները, մի ազդու շրջաբերական հեռագիր ուղարկեց Անատոլիայի բոլոր կուսակալներին և կառավարիչներին՝ ամեն հնարավոր միջոցներով ապետք կասեցներու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու, ջարդի պատասխանատուներին խստորեն պատժելու ուղղությամբ[16]:

1909թ. ապրիլի 19-ին Օսմանյան երեսփոխանական ժողովում քննության առնվեց նաև Ադանայի կուսակալ Ջևադ բեյի ապրիլի 13-ին խորհրդարան ուղարկված հեռագիրը, որտեղ կուսակալը, աղճատելով իրական վիճակը, տեղեկություններ է հաղորդում Ադանայի դեպքերի մասին, միաժամանակ մատնանշելով հայ ֆիդայիների մեղսակցության իրողությունը: Հարկ ենք համարում փաստել, որ Ադանայի թուրքական շրջանակները, շահագործելով հայկական պաշտպանական դիրքի չափազանցեցված վտանգը, հակված էին տարածելու սադրիչ բազմաթիվ լուրեր հայ ֆիդայիների կողմից կատարված միտումնավոր հարձակումների մասին: Անկասկած, այդ ենթադրյալ հարձակումներու ներկայացվում էին որպես հայերի կողմից նախապատրաստված զանգվածային արյունահեղությունների և տարածաշրջանի մահմեդական բնակչության բնաջնջման ծրագրի մի մաս[17]:

Կուսակալի հեռագրի բովանդակությունը, բնական է, չէր համապատասխանում իրականությանը և դա բողոքի մեծ սրիք բարձրացրեց հայ խորհրդարանականների, ինչպես նաև թուրք անկողմնակալ որոշ պատգամավորների շրջանակներում: Կուսակալի դեմ մեղադրականով հանդես եկավ Արիֆ Իսմեթ բեյը, նշելով, որ կուսակալի տեղեկությունները բնավ չեն համապատասխանում իրողությանը և, Մեջլիսը չի կարող վստահել կուսակալին ու անտարբեր մնալ նմանօրինակ դեպքերի նկատմամբ: Նա հանդես եկավ պառլամենտի կողմից Ադանայում հետաքննություն կատարելու նպատակով հանձնաժողով ուղարկելու, մեղավորներին պատժելու առաջարկությամբ: Քննադատելով Ջևադ բեյի հեռագիրը, հայ պատգամավորներից Վարդգեսը ժխտեց Ադանայի դեպքերին հայ ֆիդայիների մասնակցության իրողությունը, առաջ քաշելով այն տեսակետը, որ Ադանայի և Պոլսի դեպքերը նույն անձի գործն են: Նա հանդես եկավ մեղավորների ունեցվածքը բռնագրավելու և վնասնե-

ությունը փոխհատուցելու նպատակով դեպքի վայր երկու հանձնաժողով՝ մեկը Սելանիկի բանակի սպաներից, մյուսը՝ խորհրդարանից ուղարկելու, ավարառության մասնակցած անձանց ունեցվածքը ետ վերցնելու, Աբդուլ Համիդի հարստության և ունեցվածքի մի մասը Ադանայի տուժածներին տալու առաջարկություններով:

Այսպիսի կոսակալ Զևադ բեյին ե ներքին գործերի նախարարի խորհրդական Ատիլ բեյին պատերազմական ատյանի առջև դատելու պահանջով հանդես եկան նաև հայ երեսփոխաններ Հ.Պոյաճյանը և Ն.-Տաղավարյանը, ընդգծելով, որ եթե այդ մարմինները առաջին ջարդից հետո համապատասխան պատժիչ միջոցներ կիրառեին, ապա երկրորդ, իր չափերով ավելի մեծ ջարդը, տեղի չէր ունենա:

Բուռն քննարկումներից հետո, Հ.Պոյաճյանի, Արմեն Գարոյի, Հ. Պապիկյանի. Արիֆ Իսմեթ բեյի, Այի Ճենանի, Վարդգեսի, Գեղամի, Վահան Փափազյանի կողմից ստորագրվեց մի թաքրիր: Վերոհիշյալում մասնավորապես առաջ էր քաշվում Զևադ բեյին և Ատիլ բեյին զինվորական ատյանի առջև դատելու, Հալեպի նահանգում, Զեյթունում, Անթաքիայում և այլ վայրերում ռազմական դրություն հայտարարելու, իսլամական տարրերի կողմից պաշարման մեջ գտնվող Տեօրթեօլ քաղաքի ազատման վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու, Պոլսից Ադանա զինվորականներ ուղարկելու, անօգնական այրիներին ու որբերին նպաստներ հատկացնելու, թալանված ունեցվածքները տերերին վերադարձնելու և վնասների քանակը ճշտելու խնդիրները[18]:

1909թ. ապրիլի 17-ին Գ. Զոհրապը մի քանի երեսփոխանների հետ վարչապետ Հուսեին Հիլմի փաշային ծանուցեց խորհրդարանում Ադանայի կոտորածի առթիվ հարցապնդում անելու վերաբերյալ: Ապրիլի 19-ին երդիք ունենալով խորհրդարանում Զոհրապը Ադանայի և մյուս վայրերի ջարդը բնորոշեց որպես իշխանության կողմից ծրագրավորված ձեռնարկ և խիստ քննադատության ենթարկեց Ադանայի կոսակալ Զևադ բեյին. ներքին գործոց նախարար Ռեուֆ փաշային և խորհրդական Ատիլ բեյին կոտորածի պատասխանատվությունից խուսափելու, նույնիսկ հայերին անհիմն մեղադրելու փորձերի համար: Նա զավեշտական համարեց, որ խորհրդականը մինչև այժմ չի կարողացել ճշտել, թե արդյոք ջարդի սկզբնապատճառները հայերն են, թե՞ թուրքերը: Այդ նույն խորհրդականը, որը քաջատեղյակ էր հրադարձությունների զարգացմանը, զոհերի քանակի մասին ճշգրիտ տվյալներ չի կարող հայտնել. մինչդեռ Մերսինի ֆրանսիական հյուպատոսի տեղեկատվության համաձայն զոհվել էր 20-30 հազար հայ: «Հայերը իբրև ապստամբ» ցույց տալու միտումը համարեց բացարձակ հերյուրանք և հավելեց. «Բովանդակ էութիւնովս կը մերժեմ հայերուն վերագրված զրպարտությունը»: Ի հավելումն Զոհրապը խորհրդարանին ներկայացրեց մի թաքրիր, որով առաջարկում էր.

1.Պետության միջոցներից Աղանայի և Հալեպի նահանգներին որպես առաջին օգնություն տրամադրել 20 հազար ոսկի. 2.Հիշյալ նահանգներ ուղարկել զորք և անդորրություն վերահաստատել. 3.Պոլսից ուղարկված սպաներից Աղանայում զինվորական ատյան կազմել և պատժել մեծ ու փոքր բոլոր պաշտոնյաներին[19]:

Հանցագործներին պատժելու և անմիջապես նպաստ հատկացնելու խիստ պահանջով հանդես եկավ նաև Վարդգեսը: Ի վերջո բուռն վիճաբանություններից հետո խորհրդարանն ընդունեց Զոհրապի կողմից ներկայացված քաղրիրը:

Հաշվի առնելով դեմոկրատական շրջանակների արձագանքը. ինչպես նաև ջարդի առնչությամբ հայ խորհրդարանականների պահանջները, Օսմանյան երեսփոխանական ժողովի 71-րդ նիստի որոշմամբ ջարդի պատճառները ճշտելու նպատակով Աղանա ուղղարկվեց Հակոբ Պապիկյանի գլխավորությամբ չորս հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողով: Ն. Տաղավարյանի և Մուսթաֆա էֆենդիի կողմից առաջ քաշվեց և քննարկման առարկա դարձավ խառը և զուտ խորհրդարանական՝ հինգ հոգուց բաղկացած հանձնաժողովի ստեղծման հարցը. որի արդյունքում հանձնաժողովի մեջ ընդգրկվեցին երեսփոխան Յուսուֆ Քեմալը[20], պետական խորհրդի նախաղատ ատյանի նախագահ Ֆայիզ բեյն ու Մանաստիրի վիլայեթի դատական քննիչ Հարություն էֆենդի Մոստիչյանը: Հ.Պապիկյանի կողմից կազմված տեղեկագիրը, որը կարևոր նշանակություն ունեցավ Աղանայի կոտորածի լուսաբանման ու կազմակերպիչներին հայտնաբերելու խնդրում, մի շարք փաստերով հաստատում էր Իթթիհատի անդամների անմիջական մասնակցությունը Աղանայի կոտորածներին: «Ամենախոր ցաւով ստիպուած եմ աւելացնելու, որ Իթթիհատ եւ Թերաքքը կուսակցութեան անդամները, Ատանայի վայրագ եղերերգութեան կազմակերպման և գործադրութեան մասնակցած են: Այս իրողութիւնը հաստատուած է նահանգին զանազան տարրերուն կողմէ. հիւպատոսներէ, ամերիկացի միսիոնարներէ և լատին քահանաներէ»[21]:

Տեղեկագրի այս հատվածը հայերի ձեռքն է անցել Պապիկյանի մահից հետո նրա բնակարան այցելած Օսմանյան պառլամենտի անդամ Հ.Պոյաճյանի և մի թուրք երեսփոխանի միջոցով: Վերջինս կնիքը մոռացած լինելով իր հետ վերցնել Պապիկյանի տեղեկագիրը իր հարակից գրություններով կնքում է Պոյաճյանի կնիքով և հանձնում է նրա ընտանիքին: Պատրիարք Եղիշե Եպ. Դուրյանի համաձայնությամբ տեղեկագիրը բացվում, լուսանկարվում և բերվում է պատրիարքարան: Պապիկյանի այս տեղեկագիրը հայերեն թարգմանությամբ 1919թ. հրատարակվեց Կ. Պոլսի «Կիլիկիա» գրատան կողմից[22]:

Աղանայի կոտորածի առնչությամբ երիտթուրքերի, և մասնավորապես դոկտ. Նազիմի անմիջական մեղսակցության մասին է գրում նաև թուրդ լրագրող Մելան Զադե Ռիֆաթը, փաստելով, որ «Պոլսի տագնա-

պլ ընթացքին Իթթիհատ եւ Թէրագգը կուսակցութիւնը հայերը չէր մոռցած: Ատանայի մասնաճիւղը Կեդրոնէն, մասնաւորապէս Ատանայի մեջ ընդհանուր ջարդ մը պատրաստելու սկսած էր»[23]: Քաջատեղեակ լինելով հիշյալ կուսակցության գաղտնի ժողովներին, որոշումներին, գործադրման ձևերին և վարած քաղաքականությանը, Մելան Զադե Ռիֆաթը նոր լույս է սփռում երիտթուրքերի ներքին քաղաքականության վրա և հնարավորություն է սալիս հենց թուրքական աղբյուրների օգնությամբ չեզոքացնել թուրք պատմագիրների պատմությունը նենգափոխելու միտումները:

Հիմնվելով կառավարության կողմից պատասխանատուներին ճշտելու նպատակով Ադանա ուղարկված քննիչ հանձնախմբերի պատրաստած տեղեկագրերի և այլ տեղեկատվության վրա 1909թ. Մեջլիսը հրապարակեց մի հայտարարություն, որը պետական պաշտոնաթերթ «Takvimi Vckay»-ի հուլիսի 31-ի համալսում հրատարակվեց որպես նախարարական շրջաբերական (Meclisi Vukela Beyannamesi) և ուղարկվեց գավառային իշխանություններին: Վերոհիշյալում նշվում էր, որ հայերը «որոնք քանիցս իրենց դէպի Օսմանեան հայրենիքը տածած անկեղծ նուիրումութեան ապացոյցը տուած են, զոհ գացին անհիմն կասկածներու և գրգռութիւններու»: Շրջաբերականն իբրև եզրակացություն հաստատեց հայերի անմեղությունը, որոնք «չշեղեցան իրենց անցեալին ալ պահպանած հաւատարմութեան ուղիէն»[24]:

Ինչ խոսք, դա բացառիկ երևույթ էր մահմեդական մի երկրում, երբ օսմանյան կառավարությունը պաշտոնական խոստովանություն էր անում, սակայն հարց է ծագում, եթե հայերը մեղավոր չէին, ապա ովքե՞ր էին մեղավոր:

1909թ. հունիսի 29-ին Նախարարների խորհուրդը Ադանա ուղարկված քննիչ հանձնախմբերի տեղեկատվության հիման վրա որոշեց Ադանայի զինվորական ատյանի առջև դատել նախկին կուսակալ Զևադ բեյին. Ատիլ բեյին, կենտրոնական զինվորական հրամանատար Մուսթաֆա Ռեմզի փաշային, «Իթիհատ» թերթի խմբագիրներ Իհսան Ֆիքրիին[25] և Իսմայիլ Սեֆային, Զեբել-Բերեքեթի կառավարիչ Ասաֆ Էսատ բեյին և շատ այլ պետական պաշտոնյաների ու տեղական ազդեցիկ անձանց: Սակայն թվարկված այս որոշումները մնացին զուտ որպես ձևակերպում և գրեթե չգործադրվեցին[26]: Ընդհակառակը, Ադանայի կոտորածի գլխավոր հանցագործներից Զևադ բեյին, Ատիլ բեյին և ջարդարար մյուս «հայրենասերներին», փաստորեն, պաշտոնի բարձրացում էր սպասվում, որովհետև ինչպես երևաց հետագայում, Ադանայից հանված պատասխանատու պաշտոնյաների զգալի մասը բարձր աշխատավարձով ու պաշտոնով ուղարկվեց Կոնիա, Պրուսյա, Ադրիանապոլիս և այլ վայրեր: Իրենց որակմամբ դա մի «օդափոխություն էր»[27]:

Այս առնչությամբ. անհրաժեշտ է նշել, թե Օսմանյան խորհրդարանում ինչպիսի բուռն քննարկումների ու վիճաբանությունների առիթ հանդիսացավ Իսուսն Ֆիլքրիի և տեղական երևելի անձ Աբդուլ Քադիրի ձերբակալման փասար: Քանզի թուրք ծայրահեղ ազգայնականները, հանձինս Իսմայիլ Հագգը բեյի, թաքնիորով Ներքին գործերի նախարարից և վարչապետից բացատրություն պահանջեցին անհիմն, միայն նախարարների խորհրդի որոշմամբ վերը նշված անձանց ձերբակալման առնչությամբ: Եբեսփոխանական ժողովի մեծամասնությունը դեմ էր այդ հարցապնդմանը, սակայն Իսմայիլ Հագգն և իր համախոհները դա համարեցին սահմանադրության խախտում. ըստ նրանց, նույնիսկ Ադանայում պատերազմական վիճակի պարագայում, նախարարների խորհուրդը իրավասու չէ նման վճիռ կայացնելու: Բնականաբար, նման վարքագիծը խիստ վրդովեցրեց հայ պատգամավորներին: Զավեշտականն այն է, որ խոսքը գնում էր Ադանայի ջարդերի հրահրող երկու անձանց ձերբակալման և ոչ թե բանտարկության մասին: Ի վերջո ստվար մեծամասնությամբ որոշվեց հարցապնդումը հետաձգել մինչև Ադանա գնացած եբեսվախանները ներկայացնեն իրենց տեղեկագրերը[28]:

Ընդգծենք, որ ուշագրավ ու միևնույն ժամանակ տագնապեցնող հանգամանքն այն էր, որ սահմանադրության ագատ և իբր թե արդար վարչակարգի օրոք Ադանայի նման կարևոր նահանգի կուսակալության պաշտոնը հանձնված էր Աբդուլ Համիդի օգնակ-ան՝ Զևսդ բեյին, նահանգի զինվորական հրամանատարությունը՝ Սաբրաշի 1895-1896թթ. ջարդի կազմակերպիչ, Ֆերիք Մուսթաֆա Ռեմզի փաշային, որը կարծես Ադանա էր ուղարկված Զեյթունում իր կրած պարտության վրեժը լուծելու համար, իսկ ոստիկանության հրամանատարությունը հանձնված էր Ահմեդ բեյ անունով մի մոլեռանդի[29]: Դատելով վերոշարադրվածից, դեպքերի այդպիսի ընթացք, այնուամենայնիվ, կարելի էր սպասել:

Այսօր ևս թուրք պատմագրության մեջ որպես Ադանայի կոտորածի նախաձեռնող մատնանշվում են հայերը և այն նոր սերունդին ներկայացվում է որպես անխոսափելի ձեռնարկ «շփացած հայերին» կարգի հրավիրելու համար[30]: Նման գործելակերպով թուրք ազգայնամոլները փորձում են թաքցնել իրենց նախորդների ոճրագործության հետքերը:

Մեր կարծիքով ուշագրավ է նաև թուրք պատմաբան, «Միգան» թերթի խմբագրապետ Մուրսդ բեյի վաստարկները Ադանայի ջարդի վերաբերյալ: «Կիլիկիոյ ջարդը «Իթթիհատ վէ Թէրաքգը» կուսակցությունը կազմակերպեց», գրում է նա, կարևորելով այն հանգամանքը, որ Ադանայի ջարդերը Իթթիհատի ասկումբների հավաքույթներից հետո միայն սկսվեցին, իսկ Իթթիհատի «Իթիդալ» օրաթերթը բացահայտորեն հող նախապատրաստեց ջարդի համար[31]:

Եվ ի վերջո, եթե Ադանայի առաջին ջարդը վեր...գրելու լինենք տեղական կառավարության անտարբերությանն, ապա երկրորդ, ընդ որում իր

չափերով ավելի մեծ ջարդը, անկասկած, «Միություն և առաջադիմություն» կուսակցությունից զատ ոչ ոքի չենք կարող վերագրել:

1909թ. հուլիսի 23-ին Օսմանյան պատգամավորական ժողովի 124-րդ նիստի ժամանակ ցավակցություն հայտնվեց Էդիրնեի երեսփոխան Հ.-Պապիկյանի հանկարծամահ լինելու կապակցությամբ: Նախագահը ժողովին ծանուցեց հաջորդ նիստի ժամանակ Աղանայի դեպքերի վերաբերյալ Յուսուֆ Քեմալի կողմից ներկայացվելիք տեղեկագրի ընթերցման մասին: Հաշվի առնելով հայ երեսփոխան Վարդգեսի համառ պնդումները, ժողովը որոշում կայացրեց շաբաթ օրը կարդալ ինչպես Յ.-Քեմալի, այնպես էլ վաղամեռիկ Հ.Պապիկյանի տեղեկագրերը[41]: Թեև կանխորոշված, այնուամենայնիվ Հ.Պապիկյանի տեղեկագիրը այդպես էլ չընթերցվեց Օսմանյան խորհրդարանում: Պատահական չէ, որ երիտթուրքերի ղեկավարները ոչ մի ջանք չխնայեցին խափանելու իրենց կուսակցությանը քննադատող և ջարդերը խստիվ դատապարտող Հ.Պապիկյանի տեղեկագրի ընթերցումն Օսմանյան խորհրդարանում[32]:

1909թ. հուլիսի 25-ին խորհրդարանում ընթերցվեց մի քանի թուրք երեսփոխանների (Յ.Քեմալ, Արիֆ Իսմեթ բեյ, Ալի Մյունիֆ բեյ) կողմից ներկայացված գրությունը, որտեղ հանգուցյալ երեսվոխան Հ.Պապիկյանի հայրենասիրական ծառայությունները թվելուց զատ առաջարկվեց հանգուցյալի զավակներին թոշակ հատկացնել և կրթության հնարավորություն ընձեռել: Այս առաջարկը հավանության արժանացավ շատ երեսփոխանների կողմից, սակայն ելնելով «պետական գանձարանի շահերից», չընդունվեց. այն ավարտվեց թուրք երեսփոխանների միջև ծագած վիճաբանությամբ և նույնիսկ դահիճը լքելու երևույթով[33]:

Եթե Աղանայի կոտորածը միայն հետադիմական ուժերի կողմից կազմակերպված լիներ, թերևս կարելի էր որոշ մեղմացուցիչ հանգամանքներ գտնել, սակայն իթթիհատականների կազմակերպչական դերը ջարդի մեջ և Հ.Պապիկյանի խորհրդավոր պայմաններում հանկարծամահ լինելն, ավելի էր ծանրացնում ստեղծված անվստահության մթնոլորտը:

Փաստորեն, Օսմանյան խորհրդարանին հայ երեսփոխանների, Աղանայի հոգևոր պետերի կողմից ներկայացրած թաքրիրները, դիմումները, բողոքները, զեկուցագրերը կառավարության համար ծանրակշիռ արժեք չունեցան: Հարցի հետ կապված ձեռնարկվելիք միջոցներն ու խորհրդարանական քննարկումների ընթացքն այնքան թույլ էին, որ կարծես մոտ 30 հազար հայերի մահը, միլիոնավոր ոսկիների արժողությամբ գույքի ոչնչացումը այդքան էլ մեծ նշանակություն չունեցան: Հարկ է նշել, որ եթե չլինեին Արիֆ Իսմեթ բեյի, Ռիզա Թևֆիզ բեյի, Էմրուլլահ Էֆենդիի և ուրիշ անկոչմնակալ անձանց նմանները, հավանաբար, մնացածները կբավարարվեին միայն Ք.Դոռան կողմից ձեռնարկված միջոցներով: Թերևս թուրք կառավարության նոր մտավորականությունն էր, որ

հանձն առավ կոտորածի հեղինակ 40-ից ավելի մուսուլման հանցագործներին կախաղան հանել, ինչը և զայրացրեց իսլամական տարրերին, և Իթթիհատը մի գաղտնի խորհրդակցության ժամանակ նույնիսկ Հիլմի փաշային դահիճից հեռացնելու որոշում կայացրեց[34]:

Թե՛ կենտրոնի, և թե՛ գավառային իշխանությունների ձեռնարկած միջոցառումները բավականին թույլ էին, այն աստիճան, որ Ադանայում ռազմական դրություն հայտարարելուց 15 օր հետո հայ երեսփոխանների հարցապնդումներին ոչ մի հստակ պատասխան չտրվեց վնասների չափերի, զոհերի թվի, կողոպուտի քանակի մասին: Այն նույն կառավարությունը, որ 8-10 օրվա ընթացքում Կ.Պոլիս բերեց 40 հազար զորք և վերահաստատեց սահմանադրությունը, չկարողացավ մի քանի հազար զինվոր տանել Կիլիկիա՝ խռովարարներին պատժելու և թալանը ետ վերադարձնելու համար: Փաստորեն, կառավարությունը թղթի վրա մի քանի կարգադրություններ անելով, իր պարտքը ավարտված համարեց:

Կառավարությունը, ջանալով շեղել հասարակայնության ուշադրությունը, պաշտոնապես հայտարարեց, թե Ադանայի ջարդի հանցագործները 15 տեղացիներ են, որոնցից 9-ը՝ թուրք, 6-ը հայ: Ասլա բանտարկեցին 213 հայերի ու 149 թուրքերի՝ նրանց հանձնելով զինվորական դատարանին[35]: Դատավարությունը տեղի ունեցավ փակ դռների ետևում, խիստ գաղտնի: Նման պարագան օրինաչափ է, քանի որ այն հատուկ միտումով էր կազմակերպված: Մեծ վեզիր Հուսեին Հիլմի փաշան օտար տերությունների ներկայացուցիչներին խոստացել էր թույլատրել ներկա գտնվել դատին, սակայն իր խոստումը, բնական է, չկատարեց:

Ինչ վերաբերվում է զինվորական դատարանին, անհրաժեշտ ենք համարում փաստել թուրք պատմաբան Չարքի տեսակետները, ըստ որի զինվորական դատարանը ամենաշատը Հ.Պապիկյանի զեկուցագրի հիման վրա մեղավորներին մահապատժի ենթարկելով՝ մեկ անգամ ևս - հաստատեց թուրք արդարադատության աչալրջությունը[36]:

Կիլիկիայի ջարդին մասնակցած տասնյակ հազարավոր ոճրագործներից միայն 200-ը տարբեր աստիճաններով դատապարտվեց և բանտարկվեց, որոնց մեծ մասին էլ մի քանի ամիս անց ներում շնորհվեց. բանտում մնացին 86 հոգի, որոնք էլ 1912թ. դեկտեմբերի 20-ին ընդհանուր ներման արժանանալով, ազատ արձակվեցին: Փաստորեն, դրանով փակվեց Կիլիկիայի հազարավոր անմեղ հայերի հաշիվը:

Հարկ է նշել, որ զինվորական ատյանի վճիռները զուրկ էին դատաստանական և օրինական արժեքներից, որի վառ ապացույց կարող է հանդիսանալ հետևյալ փաստը: Հիշյալ ատյանի կողմից վեց հայեր դատապարտվեցին մահվան՝ իբր թե Օհան օղլու խանությունում հիսուն իսլամականների սպանելու համար: Սակայն այստեղ զարմանալիորեն նկատի չէ առնված այն հանգամանքը, որ խնդրո առարկա սպանված մահմեդականները այդ խանության բնակիչներ չէին, նրանք կասկածելի

մարդիկ էին, դրանք զանազան թաղերից էին հավաքված և բնական է, որ հայերին կոտորելու համար էին եկել և նրանց մահու զուգադիպեց հենց հայերի վրա հարձակվելու պահին[37]: Սա բերում է այն համոզմունքին, որ նույնչափ հանցավոր տեղական կառավարությունը իրական փաստերը քողարկելու և հանցանքը հայերի վրա բարդելու նպատակով զինվորական ատյանի կազմումից առաջ քննիչ հանձնախումբ նշանակվեց. «եթէ յանցանք գտան՝ աղէկ, իսկ եթէ չգտան, սուտ վկաները պատրաստ էին վկայութեան համար»[38]:

Ադանայի դեպքերի հետ կապված 1909թ. մայիսի 22-ին Կ.Պոլսի հայոց պատրիարք Եղիշե եպիսկոպոս Դուրյանը բողոքագիր ներկայացրեց Ռ.Դոանը՝ պահանջելով պատժել հանցագործներին և հատուցել վնասները: Զոհրապի առաջարկով Կ.Պոլսի հայոց պատրիարք Եղ. Եպիսկոպոս Դուրյանը ի նշան բողոքի հրաժարական տվեց, որի արդյունքում փրկվեց անմեղ հայերի կյանք:

Հետագայում Գ. Զոհրապը ստանձնեց 1909թ. Ադանայի կոտորածից հետո վեց հայ ընտանիքների դատը: Իթթիհատականները Զոհրապին առաջարկեցին ետ կանգնել դատավարությունից: Համոզված լինելով, որ կառավարությունը ամեն ինչ կանի չխստովանելու այդ մեծ անարդարությունը և դատի շարունակությունը չպետք է ունենա սպասված ավարտ, նա այդ մասին հայտնեց նույն ընտանիքներին, որոնք ուզում էին շարունակել դատը[39]:

Զոհրապի համառ ջանքերի շնորհիվ Երեսփոխանական ժողովի 66-րդ նիստի որոշման համաձայն 20 հազար ոսկի նպաստ հատկացվեց Ադանայի տուժածներին: Հետագայում քննության առնվեց նաև այլ փոխառություններ ու վարկեր տրամադրելու մի շարք խնդիրներ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Կիլիկիայի հայության կրած միայն նյութական վնասը թուրք կառավարության տվյալներով հասել էր ընդամենը 96 հազար օսմանյան ոսկու, իսկ Մեջլիսի անդամ Հ.Պապիկյանի կողմից Կ.Պոլսի իշխանություններին ներկայացրած տեղեկագրի հաշվումների համաձայն Կիլիկիայի հայության նյութական վնասը երեք միլիոն օսմանյան ոսկուց պակաս չէր[40]:

Ի հատուցումն Կիլիկիայի միլիոնավոր ոսկու արժողությամբ վնասների՝ Օսմանյան Երեսփոխանական ժողովը ընդհամենը 100 հազար օսմանյան ոսկի ծախսելու որոշում ընդունեց: Սիայն վստահելի երաշխավոր ունենալու պարագայում երկրագործներին ու վաճառականներին տրամադրվեց 50 հազար ոսկի՝ հինգ տարվա ընթացքում մաս-մաս վերադարձնելու պայմանով: Իսկ որբերի և այրիների համար օսմանյան կառավարությունը որոշեց հինգ տարվա համար տարեկան նախ 25 հազար ոսկի հանձնել Ազգային պատրիարքարանին, իսկ որոշ ժամանակ անց այդ չափը, ինչը և օրինաչափ է, 10 հազարի իջեցվեց[41]:

Գ.Զոհրապի բնորոշմամբ «Ադանայի աղետը մեր ազգի և Օսմանյան հայրենիքի մեծ սուգն է, այն մեծ զարհուրանք է և անդաբմանալի. բայց արդար լինելու համար պետք է ընդունել, որ Օսմ. կառավարությունը արեց այն, ինչ որ «ներկայ պայմաններու մէջ» բանավոր կերպով կըրնային պահանջել իրմէ»[42]:

Կառավարությունը ջալալից որոշ ժամանակ անց Ադանա ուղարկեց իթթիհատական Ջեմալ փաշային, որը 1910թ. հունվարի 23-ին Ադանայի հայ և թուրք երևելիների խնջույքում արտասանած իր ճառում այդ կոտորածը գնահատեց որպես քրիստոնյաների կողմից նյութական և մահմեդականների կողմից բարոյական վնաս[43]:

Ամփոփելով վերը շարադրվածը գալիս ենք այն եզրահանգման, որ իթթիհատական կառավարությունն, այդուհանդերձ, որոշ քայլեր ձեռնարկեց ոճրագործներին դատական հետապնդման ենթարկելով ու նյութական օգնություններ տալով, որն իհարկե ոչ մի համեմատական չափ չուներ ոճրի ծավալների հետ: Մեր կարծիքով, Ադանան այս իմաստով դարձավ երիտթուրքերի՝ Թուրքիան միատարր ազգի վերածելու արմատական ծրագրի մեկնակետ, մի խրախուսիչ ազդակ իրենց ցեղասպանական հակումները հետագայում հաջողությամբ իրականացնելու գործում: Քանզի դրանով դրսևորվեց թուրք կառավարող շրջաններին բնորոշ՝ նման հայտարարություններով իրական փաստերը քողարկելու ցայսօր շարունակվող գործելակերպը: Եվ հայ երեսփոխաններն էլ, որոնք Օսմանյան խորհրդարանում շատ փոքր թիվ էին կազմում, ինչպես նաև ելնելով կայսրությունում տիրող իրավիճակից և հենց թուրքական կուսակցությունների միջև առկա տարաձայնություններից, իրենց գործելակերպով հազիվ թե կարողանային բեկումնային փոփոխություններ կատարել:

NAIRA BABAYAN

THE 1909 ADANA MASSACRE IN THE DISCUSSIONS OF OTTOMAN PARLIAMENT: THE POSITION OF ARMENIAN DEPUTIES

The present article tries to draw a light on the events of 1909 Adana massacre, in particular it aims to display the position of Armenian deputies in achieving punishment for the criminals, subjecting them to responsibility, providing financial compensation to the suffered people, and, above all, in getting rid of the Turkish blames addressed to them.

Under the pressure of active discussions and demands of the Armenian deputies the Ottoman Parliament undertook certain steps toward balancing the created tense situation; and yet, these casual attempts to punish the criminals could be in no comparison with the scope of the crime itself.

Thus. in conclusion, it becomes obvious that Armenian deputies, very few in numbers, could hardly achieve any crucial results.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես՝ Յ.Յ.Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը. Կ.Պոլիս. 1912. «Ատանայի ջարդը եւ - պատասխանատուները», Մուշեղ եպիսկոպոս. Դաւիթէ և այլն:
2. Տես օր.՝ Հ.Հ.Սարտիրոսյան. Կիլիկիայի 1909թ. ապրիլի հայկական կոտորածը և երիտասարդ թուրքերի պատասխանատվության հարցը- Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. հ.V. Թուրքիա, Երևան, 1970, էջ 297-318:
3. Ա.Ս.Համբարյան, Երիտթուրքերի ազգային և հոլային բաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914). Երևան, 1979, էջ 36-37:
4. Հր.Ռ.Սիմոնյան, Թուրք- հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 144:
5. М.Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, Ереван, 1988, стр. 178.
6. V.Dadrian, The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust, Armenian Review, vol. 41, No 4/164, 1988, 1-3.
7. Ե.Ղ.Սարգսյան, Ռ.Գ.Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ենթագիտությունը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 16, Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, s.575.
8. Esat Uras. Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, s. 456-457.
9. S.Koça• , Tarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni ili• kileri, Ankara. 1967, s. 167-168, Talat pa• an• n hat• ralar• , Istanbul, 1946, s.167-168.
10. Kamuran Gürün, Ermeni dosyas• , Ankara 1983, s. 174-175.
11. Ա.Փափազյան, Հայերի ցեղասպանությունը թուրք բաղաքական գործիչների հուշագրություններում, Երևան, 2001, էջ 90-91:
12. Ս.Փարամազ, Կեանքն ու գործունէությունը, Փրավիտէնս, 1954, էջ 83:
13. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ.Գ.Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 253:
14. Մ.Վարանդեան, Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն, Բ. հատոր, Դաւիթէ, 1950, էջ 16:
15. «Ժամանակ», Կ.Պոլիս, 1909թ., թիվ 148, 11-24 ապրիլ:
16. Meclisi Umumi zab• t ceridesi, Devre:I Içtima senesi:I, cilt:I, Ücüncü Inikad, 12 nisan 1325 (1909) sal• .
17. V.Dadrian, The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust, Armenian Review, vol. 41, No 4/164, 1988. 7-8.
18. «Ժամանակ», Կ.Պոլիս, 1909թ. թիվ 155, 20 ապրիլ -3 մայիս, նաև Յ.Թէրզեան, նշվ. աշխ. էջ 592-597:
19. Ա.Ս.Շարուրյան, Դրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, Ս.Էջմիածին, 1996, էջ 202-203:

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

20. Սկզբում հանձնաժողովի անդամ Յուսուֆ Քեմալի փոխարեն Շեֆիզ բեյն էր ընտրվել, սակայն վերջինիս հրաժարականից հետո առաջարկվեց Թալեաթ փաշայի թեկնածությունը, սա նույնպես մերժեց և արդյունքում ընտրվեց Կաստամոնի երեսփոխան Յուսուֆ Քեմալը: Յ.Թէրզեան, նշվ. աշխ., էջ 607-611:
21. Ատանայի եղեռնը, Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (Օսմանեան երեսփոխան Էտիրնէի), Կ.Պոլիս, «Կիլիկիա» գրատուն, 1919, էջ 42:
22. Ա.Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 209-210:
23. Մեվլան Զադե Ռիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990, էջ 104:
24. Փրոֆ. Վասեագն Տատրեան, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Պայքար, 1995, էջ 111-112:
25. «Իթիհատ» թերթի խմբագիր Իհսան Ֆիքրին, ենթարկվելով դատական հետապնդման, հեռագրերով բազմիցս սպառնում է Մեծ եպարքոս Հիլմի փաշային, որ իրեն ազատ չարձակելու պարագայում բացելու է բոլոր գաղտնիքները: Վարչապետի հետ անձամբ հանդիպելուց հետո Ֆիքրին թեթև աքսորի պատիժ ստացավ, սակայն շատ չանցած Բեյրութում հանկարծամահ եղավ: (Փրոֆ. Վահագն Տատրեան, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Պայքար, 1995, էջ 112):
26. Հրանդ Գանգրունի, Հայ յեղափոխութիւնը Օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910), Պէյրութ, 1973, էջ 309:
27. Ս.Սապահ Գիլեան, Պատասխանատուները, Փրավիտենս, 1916, էջ 100:
28. «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, Յուլիս 9-22, թիւ 3.875, Յ. Թէրզյան, նշված աշխ., էջ 616-621:
29. «Ատանայի ջարդը եւ պատասխանատուները», Մուշեղ եպիսկոպոս, Գահիրէ, 1909, էջ 25:
30. Զ.Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ - դարի 90-ական թթ.- 1914թ.), հ. առաջին, Երևան, 1982, էջ 270:
31. Հրանդ Գանգրունի, Հայ յեղափոխութիւնը Օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910), Պէյրութ, 1973, էջ 310:
32. «Ազատամարտ», 1909թ., Յուլիս 23/5 օգոստոս, Կ.Պոլիս, N37:
33. «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, Յուլիս 27-9, թիւ 3.889:
34. Արշակ Ա. Ալպոյաճեան, Անհետացող դէմքեր, Գրիգոր Զոհրապ, Կ.Պոլիս, 1919, էջ 205-207:
35. Ծ.Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 273:
36. Y.G.hark, TÞrk devleti hizmetinde Ermeniler 1453-1953, Istanbul 1953, s. 237:
37. Ատանայի եղեռնը, Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (Օսմանեան երեսփոխան Էտիրնէի), Կ.Պոլիս, «Կիլիկիա» գրատուն, 1919, էջ 38-39:
38. Վեր. Համբ. Աշճեան, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 27:
39. Արշակ Ա. Ալպոյաճեան, Անհետացող դէմքեր, Գրիգոր Զոհրապ, Կ.Պոլիս, 1919, էջ 182:

40. Ալիշան Ա. Պայրամեան, Կիլիզա. Հայկական Քիլիս, Երևան 2001, էջ 192-197. նաև Շ.Թ. Թորոսյան, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920թթ. Երևան, 1987, էջ 31:
41. Յակոբ Յ.Թէրզեան, Կիլիկիոյ աղէտը, հ. 5, Կ.Պոլիս, 1912, էջ 811:
42. Դ.Զոհրապ, Հայ պատգամաւորի մը հաշուետուութիւնը, Կ.Պոլիս-Սկիւտար, 1910, էջ 20-21:
43. Հ.Մ.Պողոսյան, Զեյթունի պատմություն, Երևան, 1969, էջ 369: